

ԵՐԱՆԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԼՈՒԶ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

(Կարդացվում է Ավագ հինգշաբթի օրը, Ոտնլվայի ժամանակ)

«Աստված սեր է. և ով սիրո մեջ է, նա Աստուծո մեջ է բնակվում, և Աստված՝ նրա մեջ»[1], ասում է Որոտման Որդին՝ Քրիստոսի սիրելի աշակերտ Հովհաննեսը:

Եվ արդ, եղբայրներ, լսեցեք և ի մտի ունեցեք սիրո ճառը: Ով սիրում է Աստծուն, սիրում է նաև իր եղբորը, որովհետև Աստուծո նկատմամբ սերը եղբոր հանդեպ ունեցած սիրուց է երևում:

Քանի որ, եթե չես սիրում եղբորդ, որին տեսնում ես, ինչպե՞ս կարող ես սիրել Աստծուն, որին չես տեսնում:

Եթե մեր եղբորը սիրում ենք հոգեկան սիրով և ոչ մարմնավոր, սրանով իմանում ենք, որ սիրում ենք Աստծուն: Այլ է հոգու սերը և այլ՝ մարմնի սերը, որի մասին առաջ գնալով կասենք իր տեղում:

Արդ, ով սիրում է, ճանաչվում է Աստուծո կողմից, և ինքը ճանաչում է Աստծուն: Եվ ով սրտցավորեն չի սիրում իր եղբորը, անհաղորդ է Աստծուն և չի կարող աստվածային շնորհներ ստանալ:

Ով իր եղբորը սիրում է սուրբ սրտով, նա Աստուծո բնակարան կլինի, և Աստված կբնակվի նրա մեջ:

Որովհետև Տերն ինքը սիրեց մեզ և ճշմարիտ Հոգուն ուղարկեց, որ բնակվի մեր մեջ, քանի որ մեր իմանալի հոգին սիրով է կապակցվում Աստուծո անիմանալի հոգու հետ:

Եվ ինչպես ինքը սիրեց մեզ, նույնպես ուզում է, որ մենք սիրենք միմյանց:

Տես, թե ինչ ուժականություն ունի սերն Աստուծո նկատմամբ, որ Աստծու նման է դարձնում մարդուն, քանի որ Աստված իր սիրով նմանվեց մարդկանց և ցույց տվեց, որ մարդիկ իրենց սիրով է, որ պիտի նմանվեն Աստծուն:

Քանզի Աստված այնքան սիրեց այս աշխարհը, որ մինչև իսկ իր Միածին Որդուն ուղարկեց աշխարհի փրկության համար:

Եթե մենք միմյանց սիրենք այնպես, ինչպես Աստված սիրեց մեզ, ոչ մի չար բան չի խափանի մեր սերը: Ով սիրում է, հայտնի է մարդկանց մեջ և համարձակ՝ Աստուծո առջև, քանի որ վախ չունի մահացու մեղքերից, այլ վինված է Աստուծո սիրով և չի վախենում բոլոր սարսափպղտու վտանգներից:

Որտեղ կա սեր, այնտեղ երկյուղ չկա, ինչպես ասում է Հովհաննեսը. «Սիրո մեջ երկյուղ չկա, այլ կատարյալ սերը հեռու է վանում երկյուղը, որովհետև երկյուղը տանջանք է բերում»[2], իսկ սերը՝ համարձակություն, քանի որ երկյուղը հալածվում է սիրուց: Եվ որտեղ սեր չկա, այնտեղ կա դատաստանի երկյուղ և կորստյան սարսափ՝ մեծ ու ահեղ դատաստանի օրը:

Իսկ սերը մարդուն անվախ է դարձնում բոլոր տանջանքներից:

Սերը այն է, որ բոլորովին հեռու է կասկածամտությունից, որովհետև կասկածն ու սերը միասին չեն ապրում:

---

[1] Հովհաննու Ա թուղթ Դ 16:

[2] Հովհաննու Ա թուղթ Դ 18:

Եվ պետք է գիտենալ, որ սերը ոչ միայն հավիտենական կյանքում է իր խաղաղության պտուղները տալիս, այլև այս աշխարհում հեռու է վանում ամեն թշնամություն, նախանձ և ատելություն, ոխակալություն և չարաչքություն, չարախոսություն և հայհոյություն, տրտունջ և բամբասանք, հպարտություն և գոռոզություն, մանավանդ բոլոր չարիքների մայր արծաթսիրություն և ագահություն:

Արդ, ով սեր ունի, այս բոլոր չարիքներից հեռու կմնա և ամբողջապես ապահով կհասնի երկնային անվտանգ և խաղաղ նավահանգիստ:

Ինչն է ավելի խաղաղարար, քան սերը՝ ապատ լինել բոլոր տեսակի խռովություններից և կատարել աստվածահաճո [գործեր]:

Սերը երկնքի արքայության բանալին է և ճանապարհ՝ հավիտենական կյանքի:

Սերը մարդկանց դարձնում է Աստուծո որդիներ և երկնքի արքայության ժառանգորդներ:

Սերը ապականացու բնությունը դարձնում է անապական և մահկանացուն վերափոխում անմահության:

Սերը երկնայինն է արարում և հողեղենը դարձնում հրեղեն:

Եվ արդ, ո՞վ կարող է պատմել սիրո անչափ մեծությունը, քանի որ անպատում է և անճառելի: Ինչպես անքննելի է Աստուծո անեղ բնությունը, այնպես էլ [անքննելի] է սիրո բնությունը:

Եվ ինչպես Աստված անպարփակելի է, բայց մոտ է բոլորին և բնակվում է հեզերի, խոնարհների և նրանց մեջ, որոնք երկյուղ ունեն նրա խոսքերից, այնպես էլ սերը մոտ է բոլորին, ով կամենում է այն, և ինքը գալով բնակվում է իրեն փնտրողների մեջ, քանի որ սերը սիրում է իրեն սիրողներին և ատում է իրեն ատողներին:

[Սերը] աստվածապես մոտ է նրանց, ով փնտրում է նրան, որովհետև Աստված սեր է և կամենում է սեր, որ բխում է մաքուր սրտից և անկեղծ հավատքից:

Թարգմ.՝ Ե. ՄԵԼՔՈՆՅԱՆԻ